ՄԱՐԻՆԵ ՇԱՀԲԱԶՅԱՆ

ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ

Այսօր փոխվում են պետությունների հակամարտության ձևն ու միջոցները: Ինֆորմացիոն դարաշրջանում ստեղծվում են հակամարտության նոր տեխնոլոգիաներ ու հայեցակետեր, հաշվի են առնվում կողմերի խոցելիության նոր գործոններ: Նոր տեխնոլոգիաները առաջացնում են հակամարտության նոր ձևեր, իսկ նոր հայեցակետերը պայմանավորված են նրանով, որ ազգային ու միջազգային մակարդակներով ընթացող ինֆորմացիոն կառույցների գլոբալ էվոլուցիան բացում է ոչ միայն նոր հնարավորություններ, այլ նաև առաջացնում է նոր խնդիրներ: Նոր դարաշրջանում ինֆորմացիոն վերազինման շնորհիվ փոխվում է կյանքի ողջ ընթացքը, հասարակական ոլորտները որակական նոր հատկանիշներ են ձեռք բերում, դառնում են դինամիկ ու ճկուն, բայց միաժամանակ աճում է հասարակական գործընթացների կախվածությունը ինֆորմացիոն ազդեցություններից: Այդ պատճառով էլ սկսվել է պայքար համակարգչային ցանցերի տիրապետման համար և դա աշխարհի համար դառնում է շատ վտանգավոր: Այս բնագավառի շատ հետազոտողներ գտնում են, որ միջուկային աղետի առաջացման վտանգին կարող է փոխարինել մեկ այլ տեսակի պատերազմ[1]: Դա կլինի պայքար՝ուղղված այն երկրների դեմ, որոնք ունեն զարգացած տեխնիկա և նպատակ ունեն ինֆորմացիոն կառույցներում ստեղծել քաոս ու բերել տնտեսական աղետների: 21-րդ դարում առավել խոցելի է համարվում պայքարող կողմերից այն կողմը, որը քիչ ինֆորմացիա ունի պայքարի դաշտի մասին, դանդաղ է վերլուծում ինֆորմացիան և դանդաղում է որոշումներ կայացնելուց: Եթե նախկինում հակամարտության ժամանակ ռազմավարական ինֆորմացիայի պակասը կարելի էր լրացնել լրացուցիչ ուժի հաշվին, ապա այսօր ինֆորմացիոն գերազանցությունը միանշանակ որոշում է հակամարտության ընթացքը[2]: Այսօր հակամարտության հիմնական շեշտը դրվում է ինֆորմացիայի վրա, ինֆորմացիան է գործողությունների նպատակն ու միջոցը: Պետության, տնտեսության, պաշտպանության, բանկերի ու ձեռնարկությունների կառավարման հիմքում այսօր ընկած են ինֆորմացիոն հեռահաղորդակցման համակարգերի ստեղծումը: Այդ համակարգերում շրջանառվող ու

[1] Տես Татарников В. НАТО: новый век-новая стратегия // Обозреватель. 1999, N 4:
[2] Տես Гейтс У. Дорога в будущее. Русская редакция. М.1996:

կուտակվող ինֆորմացիան դարձել է ռազմավարական ազգային ներուժ,այն երկրի հիմնական հարստություններից մեկն է: Այդ պատճառով էլ գնալով աճում է ինֆորմացիոն-տեխնիկական պայքարի դերն ու նշանակությունը:

Տարբեր մշակույթ ու գաղափարախոսություն ունեցող ազգերի ու պետությունների միջև միշտ էլ ընթանում է ինֆորմացիոն պայքար: Ինֆորմացիան, որպես քաղաքական, տնտեսական, ռազմական, սոցիալական և այլ նպատակների հասնելու միջոց, կիրառվել է շատ վաղուց: Հակամարտող պետություններն այն կիրառել են և պատերազմի ժամանակ, և խաղաղ ժամանակ: Հիմնական նպատակն է եղել ներխուժել ազգային ու պետական ինստիտուտների գործունեության ինֆորմացիոն-ինտելեկտուալ ոլորտ և մասնակցել որոշումների կայացման ու կառավարման գործընթացին: Բայց այսօր, հասարակական ու քաղաքական հակասությունները լուծելիս, կոնֆլիկտային իրավիճակներում, ինֆորմացիոն պայքարը հեշտությամբ կարող է վերածվել ագրեսիվ ինֆորմացիոն պատերազմի որպես ինֆորմացիոն իմպերիալիզմի հատուկ ձև, որի նպատակն է խախտել երկրի կայուն վիճակը:

Ի՞նչ է ինֆորմացիոն պատերազմը և որոնք են դրա առանձնահատկությունները:

Ինֆորմացիոն պատերազմը և ինֆորմացիոն զենքը 21-րդ դարի մեծ սպառնալիքներից են: Հզոր տերությունները վաղուց հասկացել են, որ տվյալների փոխանցման ցանցը ապագայում կարող է վերածվել մարտի դաշտի: Ամեն տարի այդ երկրներում, ազգային ինֆորմացիոն համակարգերի կատարելագործման համար, ներդրվում են հսկայական միջոցներ, կազմակերպվում են բազմաթիվ միջոցառումներ: «Ինֆորմացիոն պատերազմը,որպես կանոն, ոչ մեկի կողմից չի հայտարարվում և երբեք չի դադարում,այն միշտ վարում են գաղտնի և այստեղ չկա սահման ժամանակի ու տարածության միջ»[3]: Այն հնարավորություն է տալիս խափանել ինֆորմացիոն և հեռահաղորդակցման համակարգերի նորմալ գործունեությունը: Նրա առանձնահատկությունն այն է, որ ընդգրկում է ինֆորմացիայի և ինֆորմացիոն համակարգերի բոլոր տեսակները հեռացնելով ինֆորմացիան իր կիրառման ոլորտից: Այն ընդլայնում է մարտավարման դաշտը: Ինֆորմացիոն պատերազմ կարելի է վարել և՛ պատերազմի հայտարարման դեպքում, և կյանքի տարբեր ոլորտների ճգնաժամային իրավիճակներում: Այն վարում են ինչպես մասնագետ զինվորները, այնպես էլ քաղաքացիական կառույցները: Ինֆորմացիոն պատերազմի ժամանակ աշխարհի մյուս երկրների ինֆորմացիոն ոլորտի վրա ազդելու համար ստեղծվում են ազդեցության վտանգավոր միջոցներ: Մեթոդներն ու

---

[3] Տես Дубровский Е.Н. Информационно-обменные процессы как факторы эволюции общества. М.,1996, с. 71

միջոցները, որոնք առավել արդյունավետ են ազդեցության համար, համարվում են «ինֆորմացիոն զենք»[4]:

Ինֆորմացիոն զենքը զենքի ոչ ավանդական տեսակ է: Այն տեխնոլոգիաների և ինֆորմացիոն հատուկ միջոցների ամբողջություն է, որը կիրառվում է բնակչության մտահոգեկերտվածքի ու պետության ինֆորմացիոն-տեխնիկական համակարգերի վրա քայքայիչ ազդեցության գործադրելու համար: Ինֆորմացիոն զենքը ինֆորմացիոն զանգվածների ոչնչացման, աղավաղման ու կողոպուտի միջոց է: Այն կազմալուծում է տեխնիկական համակարգերի աշխատանքը, շարքից դուրս է հանում հեռահաղորդակցման ցանցը, համակարգչային համակարգը և հասարակական կյանքն ու պետության գործունեությունն ապահովող տեխնոլոգիական միջոցները: Ինֆորմացիոն զենքը հարվածի մյուս միջոցներից տարբերվում է իր գաղտնիությամբ, մասշտաբայնությամբ և ունիվերսալությամբ: Այն կիրառվում է ինչպես ռազմական ոլորտում, այնպես էլ տնտեսական, սոցիալական և այլ ոլորտներում նպատակ ունենալով կազմալուծել վարչական կառույցների, տրանսպորտային ու հաղորդակցման համակարգերի գործունեությունը, խափանել որոշ ծեռնարկությունների ու բանկերի, ինչպես նաև արդյունաբերության որոշ ճյուղերի աշխատանքը, հակառակորդի տարածքում առաջացնել մեծ տեխնածին աղետներ, մարդկանց գիտակցության մեջ ներմուծել ու տարածել սովորույթների ու վարքի որոշակի տարատեսակներ, բնակչության մեջ առաջացնել դժգոհություն ու խուճապ: Ինֆորմացիոն զենքի առանձնահատկությունն այն է, որ վնասում է մարդու ուղեղը, ձևափոխում է անհատի հիշողությունը, ստեղծում է նախորոք որոշված չափանիշներով անձ, խափանում է հակառակորդ պետության կառավարման համակարգերի ու զինված ուժերի աշխատանքը[5]: Նրա հիմնական չափանիշը արդյունավետությունն է: Մինչև այսօր չկա ինֆորմացիոն զենքի հատուկ դասակարգում: Առավել ավանդական ու հզոր ինֆորմացիոն զենք են հանդիսանում զանգվածային լրատվական միջոցներն ու քարոզը: Հեռանկարային է ինֆորմացիոն տեխնոլոգիաների կիրառումը որպես ինֆորմացիոն զենք,քանի որ ինֆորմացիոն տեխնոլոգիաները մեծ ճշգրտություն ունեցող ռազմամթերքի անբաժանելի մասն են կազմում:

Կան ինֆորմացիոն զենքի տարբեր տեսակներ, բայց կարելի է առանձնացնել հետևյալ հիմնական տեսակները.

• զանգվածային լրատվական միջոցներ (ռադիո, հեռուստատեսություն) և քարոզի միջոցներ (տեսաերիզներ, էլեկտրոնային գրքեր, հանրագիտարաններ և այլն): Ինֆորմացիոն զենքի այս տեսակի կիրառման նպատակն է

---

[4] Տես՝ Ракитов А.И. Философия компьютерной революции. М. 1991, с. 271:

[5] Տես՝ Аскеров Т.М. Защита информации и информационная безопасность. Учебное пособие / Под общей редакцией К.И. Курбакова. М. Рос. экон. акад., 2001г., с. 387 :

ինֆորմացիոն վնաս պատճառել բնակչությանը, ազդել երկրի հոգևոր կյանքի, պատմական հիշողության, աշխարհայացքի ու բարոյական գաղափարների վրա և կառավարել նրանց վարքը:

• էլեկտրոնային միջոցներ. էլեկտրոնային միջոցների կամ համակարգչային տեխնոլոգիաների կիրառման նպատակն է բարձրացնել սեփական ինֆորմացիոն համակարգերի ու միջոցների գործունեության արդյունավետությունը, բացահայտել հակառակորդի ռադիոէլեկտրոնային սարքավորումները, ընդհատել նրանց աշխատանքը, փոփոխել ծրագրային ռեսուրսները կամ ամբողջությամբ ոչնչացնել:

• Հոգեբանական միջոցներ (հատուկ գեներատորներ, տեսագրական և հեռուստատեսային ինֆորմացիա և այլն): Այս միջոցը հնարավորություն է տալիս հեռակառավարման ճանապարհով ստեղծել բնակչության որոշակի մոդել: Նրանց միջոցով ստեղծվում է իրավիճակի թվացյալ պատկեր, որը տարբերվում է իրականությունից: Այն փոխում է մարդկանց արժեքային համակարգը, առաջացնում է հոգեկան և հոգեֆիզիկական խանգարումներ:

Հոգեբանական միջոցների այլ տեսակ են հատուկ դեղամիջոցներն ու դեղանյութերը (ալկոհոլ, թմրանյութ և այլն). Հոգեբանական զենքի այս տեսակը ազդում է մարդու հոգեկանի վրա գենային կամ քրոմոսոմային մակարդակում: Դեղամիջոցները խզում են օրգանիզմի ինֆորմացիոն-հոգեբանական և ֆիզիկական պրոցեսների միջև գոյություն ունեցող կապը, առաջացնում են հոգեկան խանգարումներ:

Հոգեբանական զենքն ազդում է մարդկանց հոգեկանի ու ենթագիտակցության վրա: Հիմնական նպատակն է կոտրել մարդկանց կամքը և ծրագրավորել նրանց, ստեղծել մարդու որոշակի տեսակ: Խիստ կարևոր նշանակություն ունի ինֆորմացիոն զենքի հոգեբանական ազդեցության ուսումնասիրությունը: Չնայած համակարգչային տեխնիկայի կատարելագործմանն ու տարածմանը, մարդն է կառավարման բարձրակարգ օղակը, նա է ընդունում վերջնական որոշումները և նա է պատասխանատու դրանց համար: Երբ մարդը որոշումներ է կայացնում ինֆորմացիայի ավելցուկի կամ պակասի պայմաններում, մեծ է սխալվելու հավանականությունը: Ըստ հոգեբանների, ինֆորմացիայի մատուցման ձևերն ու միջոցները, ծավալն ու հաճախականությունը չհամաձայնեցնելով գլխուղեղի ընկալման հնարավորությունների հետ, կարող է ծանրաբեռնվածություն առաջացնել, բերել ողջ նյարդային համակարգի արգելակմանը և մարդը չի կարող ճիշտ գնահատել իրավիճակը[6]: Սա է այն հիմնական պատճառներից մեկը, որ մեր օրերում ինֆորմացիոն պատերազմում հոգեբանական ազդեցություն գործադրելիս շեշտը դրվում է մարդու վրա,

---

[6] Տես Гареев М.А. Война и военное искуство в меняющемся мире. // Международная жизнь. 1994, N 3. с. 93:

մարդն է ազդեցության հիմնական օբյեկտը: Հոգեբանական ճնշումը, քաղաքական ու ռազմական նպատակներին հասնելու համար, արդյունավետ միջոց է: Պատերազմների պատմությունը վկայում է, որ հոգեբանական ազդեցությունը ռազմական ու քաղաքական պայքարի կարևոր մաս է կազմում: Բայց միայն 20-րդ դարում այն դարձավ գիտական հետազոտության առարկա և սկսեց հենվել գիտությունների նվաճումների վրա: Հոգեբանական ազդեցության տեսության մշակման ու զարգացման համար կարևոր նշանակություն ունեցավ Առաջին համաշխարհային պատերազմը: Այս շրջանում սկսեց զարգանալ քարոզչական նյութերի պատրաստումն ու տարածումը, քարոզը կազմակերպելու համար ստեղծվեցին հատուկ մարմիններ:

Փորձը ցույց է տալիս, որ արդյունավետ է այն-ազդեցությունը, որն ուղղված է հակառակորդի բարոյական ոգու ճնշմանը: Դա կատարվում է տեղեկացման ճանապարհով՝ տեղեկացնելով նրան հրատապ թեմաների մասին, որն ազդում է առօրյա գիտակցության վրա: Հոգեբանական միջոցառումների հիմնական նպատակը խուճապ առաջացնելն է և վախի ներշնչումը:

Վերջին տարիներին հոգեբանական տեխնոլոգիաներ լայնորեն կիրառվել են Միացյալ Նահանգների կողմից Պարսից ծոցում ընթացող պատերազմի ժամանակ: Քարոզչական նյութերում, որոնք աչքի էին ընկնում իրենց պարզությամբ ու մատչելիությամբ, մեծ ուշադրություն էր հատկացվել Իրաքի բնակչության ազգային հոգեբանական առանձնահատկություններին: Դրանք պատրաստելիս կիրառվել էին ավանդական իսլամական նկարազարդումներ, ասույթներ Ղուրանից, ինչպես նաև գույներ, որոնք բնորոշ են մահմեդական մշակույթին: Ռադիոծրագրերում հնչում էր արաբական երաժշտություն, հաղորդումները վարում էին հաղորդավարներ, որոնք բացարձակ տիրապետում էին տեղի բարբառին: Այս միջոցները նպաստում էին ինֆորմացիոն նյութերի նկատմամբ վստահության ձեռք բերմանը:

Համաշխարհային հանրության վրա հոգեբանական ազդեցություն գործադրելու համար լայն տարածում է ստացել «հուշանվերային քարոզչությունը»[7]: Շատ երկրներում այսօր վաճառվում են հակաիրանական խորհրդանիշով ապրանքներ, օրինակ զուգարանի թղթեր Ս.Հուսեյնի դիմանկարով, բլուզներ, որոնց վրա պատկերված են թռչող հրթիռներ մակագրություններով՝ «Ողջույն ԱՄՆ-ի ծովային հետևակազորից», «Մինչ հանդիպում Բաղդատում» և այլն:

Ինֆորմացիոն-հոգեբանական պատերազմ վարելիս խիստ գրաքննության է ենթարկվում ինֆորմացիան, որը տրվում է զանգվածային լրատվական միջոցներով: Ուղիղ եթեր հեռարձակվող հաղորդումները, իրավիճակը

---

[7] Տես Партыка Т.Л., И.И. Попов. Информационная безопасность. М. 2004, с 50-53:

լուսաբանելիս, ստեղծում են օբյեկտիվության ու անաչառության պատրանք, բայց իրականում դա լավ ծրագրավորված մոլորություն է (դեզինֆորմացիա):

Այսպիսով, ժամանակակից ինֆորմացիոն պատերազմի պայմաններում հակառակորդը կկիրառի ոչ միայն հոգեբանական զենքեր, այլ նաև կծգտի ուժեղացնել դրանց թողած բացասական ազդեցությունները հոգեբանական ազդեցության ավանդական միջոցներով ու մեթոդներով: Կենդանի ուժի վրա գործադրվող ինֆորմացիոն միջոցները լինում են երկու տեսակի՝ ազդեցության ինֆորմացիոն-հոգեբանական և էներգետիկ-ինֆորմացիոն միջոցներ: Զենքի այս տեսակների տարբերությունը այն է, որ ինֆորմացիոն-հոգեբանական զենքը գիտակցության միջոցով է ազդում մարդու հոգեկանի վրա, հիմնականում զանգվածային լրատվական միջոցների, համակարգչային խաղերի ու ինտերնետի օգնությամբ: էներգետիկ-ինֆորմացիոն զենքը բնախոսության միջոցով է ազդում մարդու հոգեկանի վրա՝ հետին պլան մղելով գիտակցությանը: Մարդը չի գիտակցում ազդեցության փաստը, բաց ազդեցության կանոնակարգից կախված, սկսում է զգալ թուլություն, ճնշվածություն, վախ, անվստահություն կամ ընդհակառակը դառնում է առույգ ու կենսուրախ:

Բնության մեջ մարդու վրա հոգեֆիզիկական ազդեցություն գործում են արևային բռնկումները: Արևային քամու էլեկտրամագնիսական ազդակները ձևավորվելով Երկիր մոլորակի վերին շերտում, խթանում են գլխուղեղի աշխատանքը և միաժամանակ համատեղում հոսանքների շարժման հաճախականությունը: Գլխուղեղի նման կարողությունը ձևավորվել է երկարատև էվոլուցիայի ընթացքում: Արևային ազդակները, կախված նրանց հզորությունից, փոխում են գրգռման ու ներշնչման մակարդակը:

էներգետիկ-ինֆորմացիոն ազդեցության նշված առանձնահատկությունները կարող են կիրառվել մարդկանց վարքի փոփոխման ու սոցիումի ինքնահաստատման վրա ազդելու համար: Օրինակ, էներգետիկ-ինֆորմացիոն ազդեցության օգնությամբ կարելի է «բռնկել» կամ «մարել» ցույցեր, գործադուլներ, անկարգություններ և դրանով իսկ ազդել սոցիալական, քաղաքական (օր.՝ կառավարման մարմինների ընտրություն), տնտեսական (օր.՝ արդյունաբերության նորմալ ընթացքի խախտում) ու ռազմական գործողությունների վրա: Դա կատարվում է հետևյալ կերպ: Առաջարկված թեկնածուի մասին, որը պետք է որոշակի պաշտոն զբաղեցնի, զանգվածային լրատվական միջոցներով տրվում են դրական տեղեկություններ: էներգետիկ-ինֆորմացիոն ազդեցության օգնությամբ, բնակչության մոտ ստեղծելով լավ հոգեֆիզիկական վիճակ, մշակվում են դրական պայմանական ռեֆլեքսներ տվյալ թեկնածուի նկատմամբ և դրա հաշվին բարձրանում է նրա հեղինակությունը: Երբ բացասական ինֆորմացիա է տրվում թեկնածուի մասին, մարդկանց մոտ առաջանում է վատ հոգեֆիզիկական վիճակ և էներգետիկ-ինֆորմացիոն ազդեցության շնորհիվ մշակվում են բացասական պայման ռեֆլեքսային թեկնածուի նկատմամբ: Վատացնելով

զինծառայողների հոգեֆիզիկական վիճակը կարելի է իջեցնել նրանց մարտունակությունը: Եվ հակառակը, լավացնելով նրանց հոգեֆիզիկական վիճակը բարձրացնել մարտունակությունը: Այսպիսով, առաջանում են մարդկանց հեռակառավարման հնարավորություններ, ազդել նրանց գործողությունների վրա ընտրությունների ժամանակ, ռազմական գործողություններում, ծայրահեղ իրավիճակներում և այլն: Նա, ով տիրում է էներգետիկ-ինֆորմացիոն ազդեցության միջոցներին, ձեռք է բերում սոցիալ-քաղաքական ու տնտեսական գործընթացների կառավարման գերիշխանություն:

21-րդ դարում նախապատվությունը տրվում է ինֆորմացիոն զենքին:Եթե զենքի նյութական տեսակները ազդում են մարդու կենսաէկոլոգիական վիճակի վրա, ինֆորմացիոն տեսակները ազդում են հոգևոր վիճակի վրա[8]: Այն ավելի մեծ ազդեցություն է թողնում հասարակության վրա, քան զենքի նյութական տեսակները, ինչը բխում է նրա կառուցվածքից ու առանձնահատկություններից: Ինֆորմացիոն զենքը կառուցվածքային առումով շատ ավելի հարուստ է, հեշտությամբ է տեղաշարժվում ժամանակի ու տարածության մեջ, իսկ ազդեցության ծավալը շատ մեծ է: Այն գլոբալ ոչնչացման զենք է: Ելնելով նրա հնարավորություններից, անձի ու հասարակության վրա թողած ազդեցությունից շուկայական հարաբերությունների ու գլոբալ ինֆորմացիոն վերազինման պայմաններում գնալով մեծանում է ոչ ավանդական զենքի դերն ու նշանակությունը: Բայց չպետք է մոռանալ, որ ինֆորմացիոն պատերազմի տեխնոլոգիաների զարգացումը նույնպիսի վտանգ է, ինչպես զանգվածային բնաջնջման զենքերի տարածումը, միջազգային հանցագործությունը, ահաբեկչությունն ու նարկոբիզնեսը:

---

[8] Տես Ловцов Д. Проблема обеспечения информационной безопастности России // Обозреватель. 1999, N 2, с. 48-49: